ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 152 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2102-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՆՈՐ ՓՐՈՋԵԿՏՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 2102-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակը 56-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 57-րդ կետով.

«

57.	4107991000	Կաշի՝ խոշոր եղջերավոր անասունների (ներառյալ գոմեշները) մորթերից, կաշի փափուկ կահույքի պատրաստման համար (խոշոր եղջերավոր անասունի կաշվից)	կաշի կահույքի պատրաստման համար	քառ. մ	2 300	ԵՄ, ԱՊՀ, ԱՄԷ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Իսրայել, Ուկրաինա, Վրաստան, Թուրքիա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա	ԵՄ, ԱՊՀ, ԱՄԷ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Իսրայել, Ուկրաինա, Վրաստան, Թուրքիա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա	47 000 000	

».

2) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «1 264 400 000» թիվը փոխարինել «1 311 400 000» թվով.

3) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «1 395 400 000» թիվը փոխարինել «1 442 400 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ